ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2016
02.2016
03.2016
04.2016
05.2016
Մայիս
06.2016
07.2016
08.2016
09.2016
10.2016
11.2016
12.2016

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 23-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2016

Մայիս

թիվ 5 (213)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

4 ««Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-46-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՊրոԿրեդիտ բանկ» ՓԲԸ-ի՝ բանկային գործունեության, «Կոն-Բրոսել» ՍՊԸ-ի արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու, «Մանիտուն» ՍՊԸ վճարահաշվարկային կազմակերպությանը «Մանիտուն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև «Իդրամ» ՍՊԸ վճարահաշվարկային կազմակերպության «Դավիթաշեն ՏՊ» մասնաճյուղը հաշվառելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Կրեդիտ Սիթի» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա տրամադրելու, ինչպես նաև «Ամերիա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին ինքնալուծարման թույլտվություն տրամադրելու և ներդրումային ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Ինեկոբանկ» և «ՊրոԿրեդիտ բանկ» ՓԲԸ-ների փոխանցման ակտը գրանցելու, «ՊրոԿրեդիտ բանկ» ՓԲԸ-ի և նրա մասնաճյուղերի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Նոր Հորիզոն» և «Ջի Ընդ էյ» ՈՒՎԿ ՍՊԸ-ների համապատասխանաբար «Նար-Դոս» ներկայացուցչությունը և «Կիլիկիա» մասնաճյուղը գրանցումից հանելու, «Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ-ի «Մալաթիա» մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 14 գրավատների, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու և 3 արտարժույթի փոխանակման կետերի, 2 գրավատների նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 82Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 3 պաշտոնական պարզաբանումը «Բանկի կողմից արգելադրման ենթակա արժեքների վերաբերյալ»

12 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Դրամարկղային գործառնությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-501-Ն օրենքի 4-րդ հոդվածը «դրամարկղային գիրք`» բառերից հետո լրացնել «թղթային կամ էլեկտրոնային» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
6 մայիսի 2016 թ., Երևան, ՀՕ-46-Ն

[*] *ՀՀՊՏ 2003 N 7 (242), 05.02.03:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի ապրիլի 25-ին (ՀՀՊՏ N 38 (1218), 18.05.16):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՊրոԿրեդիտ բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ բանկային գործունեության, ինչպես նաև «Կոն-Բրոսել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 69Ա, 89Ա):
- ***«Մանիտուն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Մանիտուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպությանը (որոշում թիվ 70Ա):
- ***Դադարեցվել է*** «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Դավիթաշեն ՏՊ» մասնաճյուղը (որոշում թիվ 76Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «Կրեդիտ Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 77Ա):
- ***Ինքնալուծարման թույլտվություն է տրվել*** «Ամերիա Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությանը:
  Ուժը կորցրած է ճանաչվել «Ամերիա Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիան (որոշում թիվ 90Ա):
- ***Գրանցվել է*** «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության և «ՊրոԿրեդիտ բանկ» փակ բաժնետիրական ընկերության փոխանցման ակտը:
  Բանկերի գրանցամատյանում կատարվել է գրառում «ՊրոԿրեդիտ բանկ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարեցման վերաբերյալ:
  Գրանցվել է «ՊրոԿրեդիտ բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Արտաշատ», «Արմավիր», «Աջափնյակ», «Կոմիտաս», «Մաշտոց», «Շենգավիթ», «Նոր Նորք», «Տերյան», «Մալաթիա», «Վանաձոր» և «Գյումրի» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/312Ա):
- ***Թույլատրվել և գրանցվել է*** «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Վանաձոր 2» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/314Ա):
- ***Գրանցումից հանվել են*** «Նոր Հորիզոն» և «Ջի Ընդ էյ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համապատասխանաբար «Նար-Դոս» ներկայացուցչությունը և «Կիլիկիա» մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/315Ա, 1/324Ա):
- ***Թույլատրվել է դադարեցնել*** «Բիբլոս բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Մալաթիա» մասնաճյուղի գործունեությունը (որոշում թիվ 1/346Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 14 գրավատների, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 4300000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/295Ա, 1/296Ա, 1/311Ա, 1/316Ա, 1/338Ա, 1/359Ա, 1/360Ա-1/362Ա, 1/359Ա-1/362Ա, 1/374Ա, 1/330Ա) և 3 արտարժույթի փոխանակման կետերի, 2 գրավատների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/294Ա, 1/337Ա, 1/358Ա, 1/336Ա, 1/347Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 82Ա որոշմամբ 2016 թ. մայիսի 18-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 7.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 9.25%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 6.25%:***

Բանկի կողմից արգելադրման ենթակա արժեքների վերաբերյալ[*]

Վերջին շրջանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) բազմաթիվ միջնորդություններ է ստանում ՀՀ տարածքում գործող բանկերից և ՀՀ քաղաքացիներից՝ խնդրելով պարզաբանել արդյո՞ք հարկադիր կատարողի կողմից ուղարկված էլեկտրոնային հաղորդագրության հիման վրա արգելադրման ենթակա են՝

1. առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների իրականացման վճարահաշվարկային համակարգերի միջոցով փոխանցված դրամական միջոցները (այսուհետ՝ Անհաշիվ դրամական փոխանցում),
2. բանկի կողմից հաճախորդին տրամադրված անհատական պահատեղում (այսուհետ՝ Պահատեղ) պահվող արժեքները,
3. բանկի հաճախորդի պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով գրավադրված գույքը՝ ապահովված պարտավորությունները կատարելուց հետո:

Ընդունելով այն հանգամանքը, որ թե Անհաշիվ դրամական փոխանցումները, թե Պահատեղի վարձակալության գործարքները, և թե բանկում գրավադրված արժեքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված արգելադրման ենթակա միջոցների շրջանակում ընդգրկվածության տեսանկյունից հստակեցման կարիք ունեն և նպատակ ունենալով ապահովել Բանկերի կողմից կիրառվող արգելադրումների ընթացակարգի միասնական կիրառումը, Կենտրոնական բանկը հիմնավոր և արդարացված է համարում նշված պայմաններում պաշտոնական պարզաբանման տրամադրումը:

Վերը բարձրացված հարցադրումները պարզաբանելու համար անհրաժեշտ է ըստ հերթականության վերլուծել վերը նշված գործարքները՝ առանձին-առանձին անդրադառնալով վերը թվարկված բոլոր արժեքների արգելադրման հետ կապված հարցերին:

1. Անհաշիվ դրամական փոխանցումների արգելադրումների հետ կապված հարցեր

Սույն հարցադրումը պարզաբանելու համար Կենտրոնական բանկն առաջին հերթին անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել Անհաշիվ դրամական փոխանցման էությանը, պարզելու համար արդյո՞ք վերջինը որևէ կերպ կարող է ընդգրկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված արգելադրման ենթակա դրամական միջոցների շրջանակում, թե ոչ:

Անհաշիվ դրամական փոխանցումն իրենից ենթադրում է դրամական միջոցի փոխանցում մեկ անձից մյուսին՝ առանց այդ ընթացքում որևէ բանկային կամ այլ հաշվի բացման և/կամ դրա վրա գումարի մուտքագրման: Այսինքն՝ Անհաշիվ դրամական փոխանցման ժամանակ որևէ հաճախորդի անունով չի բացվում որևէ բանկային հաշիվ, իսկ բանկն, իր հերթին, որևէ անձի անունով դրամական փոխանցման առկայության մասին կարող է տեղեկանալ բացառապես վերջինիս ներկայանալու և վճարումը անհատականացնող կոդը տրամադրելու պարագայում:

Ավելին, Անհաշիվ դրամական փոխանցումները ***չեն հանդիսանում այդ փոխանցման շահառուի սեփական միջոցները՝ մինչ դրա փաստացի տրամադրումը հասցեատիրոջը***: Այսինքն, մինչ համապատասխան գումարի վճարումը շահառուին, որևէ պարագայում հնարավոր չէ պնդել, որ դրանք հանդիսանում են պարտապանի (շահառուի) դրամական միջոցները: Նշված պնդումը հիմնավորվում է նաև հետևյալով.

- վճարահաշվարկային համակարգերի կանոններով, որոնք հանդիսանում են վճարահաշվարկային համակարգերի գործունեության հիմնական կարգավորող փաստաթուղթը, տարբեր մանրամասնություններով, նախատեսված է հնարավորություն հետ կանչել Անհաշիվ դրամական փոխանցումը մինչ դրա փաստացի տրամադրումը հաճախորդին, ինչպես նաև սահմանված է բանկի պարտավորությունը՝ նախատեսված որոշակի ժամկետի ավարտից հետո հաճախորդի չներկայանալու դեպքում փոխանցված գումարները հետ վճարել փոխանցումը նախաձեռնած անձին: Այսինքն՝ Անհաշիվ դրամական

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. մարտի 4-ին (ՀՀԳՏ N9 (552), 15.04.2016):

փոխանցման արգելադրման պարագայում կստացվի, որ արգելադրվել են ոչ թե պարտապանի, այլ երրորդ անձի դրամական միջոցները:

Այժմ, փորձելով վերը նշված գործարքը համադրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված արգելադրվող դրամական միջոցների հետ, անհրաժեշտ է նախ նշել, որ համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ և 47-րդ հոդվածների 2-րդ մասերի՝ հարկադիր կատարողի կողմից ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների հիման վրա բանկերը արգելանքներ են կիրառում ***բանկային հաշիվներում*** և ***ավանդներում*** պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա:

Օրենքի 46-րդ և 47-րդ հոդվածների 2-րդ մասերով սահմանվում է նաև, որ հարկադիր կատարողի կողմից ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ:

Արձանագրելով, որ Օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտը չի կարող հակասել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին, անհրաժեշտ է նշել, որ Օրենքի վերը նշված կարգավորումից բացի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 520-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված հարկադիր կատարողի կողմից բանկին ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևերով ընդամենը մանրամասնեցվում և հստակեցում են Օրենքով նախատեսված արգելադրման ենթակա դրամական միջոցների ներգրավման գործիքների տեսակները:

Հարկ է շեշտադրել, որ ի տարբերություն բանկային հաշիվների վարման կամ ավանդների ընդունման գործառույթի, Անհաշիվ դրամական փոխանցումները կարող են իրականացվել նաև համապատասխան լիցենզիա ստացած վճարահաշվարկային կազմակերպության միջոցով: Այսինքն՝ վճարահաշվարկային կազմակերպությունների բացակայությունը արգելանք կիրառող անձանց շարքից, իր հերթին, նույնպես վկայում է այն մասին, որ Անհաշիվ դրամական փոխանցումների արգելադրումը չի բխել օրենսդրի կողմից որդեգրած քաղաքականությունից: Այլապես ստացվում է, որ եթե ներկայում Անհաշիվ դրամական փոխանցումները մեկնաբանվեն որպես բանկի կողմից արգելադրման ենթակա դրամական միջոցներ, ապա վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով հնարավոր կլինի առանց որևէ արգելանքի կիրառման վտանգի իրականացնել Անհաշիվ դրամական փոխանցումներ, ինչն էլ իր հերթին, անընդունելի անհավասար մրցակցային պայմաններ կստեղծի երկու տարբեր ֆինանսական կազմակերպությունների համար:

2. Պահատեղում պահվող արժեքների արգելադրման հետ կապված հարցեր

Անդրադառնալով Պահատեղի վարձակալության գործարքի էությանը, պետք է նշել, որ նշված գործարքը, որպես բանկի կողմից մատուցվող ծառայություն, առաջին հերթին սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Մասնավորապես, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 848-րդ հոդվածի 1-ին մասի՝ Բանկը կարող է ի պահ ընդունել արժեթղթեր, թանկարժեք մետաղներ և քարեր, այլ թանկարժեք գույք ու այլ արժեքներ, ներառյալ՝ փաստաթղթեր: Բանկի նույն գործառույթը սահմանված է նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով:

Այս տեսանկյունից նախ հարկ է նշել, որ վերը նշված հոդվածները որևէ կերպ չեն սահմանափակում Պահատեղում պահպանման ենթակա հնարավոր գույքի տեսակները՝ միմիայն սահմանափակվելով դրա՝ բանկի հաճախորդի համար արժեք ներկայացնելու հանգամանքով: Հետևաբար, չեն բացառվում դեպքեր, որ Պահատեղում պահվող առարկաները արժեք ներկայացնեն միմիայն դրա տիրապետողի կամ այլ անձի համար, սակայն միաժամանակ որևէ իրական շուկայական արժեք չներկայացնեն՝ այդ գույքը լիկվիդային միջոցի վերածելու առումով: Ավելին, անհրաժեշտ է նշել, որ հնարավոր են դեպքեր, երբ Պահատեղերում պահպանվեն այնպիսի առարկաներ (գույք), որոնց նկատմամբ՝ համաձայն ՀՀ օրենսդրության, արգելանք կիրառվել ընդհանրապես չի կարող:

Բացի այդ, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 849-րդ հոդվածի 2-րդ մասի՝ բանկի անհատական պահատեղում արժեքների պահատվության պայմանագրով հաճախորդն իրավունք ունի առանց որևէ մեկի (ներառյալ՝ բանկի) հսկողության արժեքներն անձամբ տեղադրել պահատեղում և հանել այնտեղից: Դրա համար հաճախորդին տրամադրվում են պահատեղից ինքնուրույն օգտվելու համար անհրաժեշտ միջոցներ: Նույն հոդվածով սահմանվում է նաև, որ պայմանագրով կարող է նախատեսվել պահատեղում տեղադրված արժեքների հետ աշխատելու հաճախորդի իրավունքը:

Այսպես, Պահատեղը պայմանագրային պարտավորությունների շրջանակից դուրս օգտագործելու վերաբերյալ կասկածների պարագայում անգամ բանկի և հաճախորդի միջև կնքվող պահատեղի վարձա-

կալության պայմանագրերում, որպես կանոն, նախատեսվում է մինչ Պահատեղի բացումը հաճախորդին նախապես ծանուցելու ընթացակարգ, որպեսզի Պահատեղը բացվի հաճախորդի ներկայությամբ:

Հատկանշական է, որ անգամ Պահատեղի վարձակալության գործարքի կնքման ժամանակ բանկերը չեն տիրապետում անհատական պահատեղի պարունակությանը և, հետևաբար, չեն տիրապետում որևէ տեղեկատվության այն մասին, արդյո՞ք Պահատեղում պահվում է բռնագանձման ենթակա գույք, թե ոչ: Ավելին, որևէ օրենսդրական դրույթ չի արգելում բանկի հաճախորդին Պահատեղում պահպանել նաև այլ անձի պատկանող գույք, այդ թվում՝ անհատապես որոշվող: Նման պարագայում Պահատեղի արգելադրումը կարող է առնչվել և սահմանափակել արդեն այլ անձանց իրավունքները և խնդիրներ առաջացնել Օրենքի 45-րդ հոդվածի կարգավորման շրջանակում՝ բռնագանձման գործողության տեսանկյունից:

3. Բանկում գրավադրված գույքի արգելադրման հետ կապված հարցեր

Ինչ վերաբերում է այն հարցադրմանը, թե արդյո՞ք բանկում, վերջինիս հանդեպ առկա հաճախորդի պարտավորությունների կատարումն ապահովող գրավը, այդ պարտավորությունների կատարումից հետո ենթակա է արգելադրման, ապա առաջնահերթորեն հարկ ենք համարում անդրադառնալ գրավի ինստիտուտին և դրա էությանն ընդհանրապես:

Այսպես, գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մաս):

Միևնույն ժամանակ սահմանված է, որ գրավը ակցեսոր պարտավորություն է (լատ. accessorius - լրացուցիչ, լրացնող), ինչը նշանակում է, որ վերջինիս գործողությունը ***կախված է բացառապես*** հիմնական պարտավորության, ի ապահովումն որի այն տրված է, գործողությունից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 2-րդ մաս): Այսինքն՝ եթե ինչ-ինչ պատճառներով հիմնական պարտավորությունը դադարել է (օրինակ՝ դրա կատարման հետևանքով), հետևաբար առկա չէ նաև ի ապահովումն այդ պարտավորության տրամադրված գույքի գրավը:

Դեռ ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ գրավով ապահովված պարտավորության կատարման հետևանքով կամ գրավատուի պահանջով (237 հոդվածի 3-րդ կետ) գրավը դադարելու դեպքում գրավառուն, որի մոտ գտնվել է գրավ դրված գույքը, ***պարտավոր է այն անհապաղ վերադարձնել գրավատուին***:

Վերը նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ցանկացած պարագայում հիմնական պարտավորությունը բանկի հանդեպ կատարած լինելու դեպքում բանկը ոչ միայն իրավունք չունի իր մոտ պահել գրավը (կամ դրա նկատմամբ որևէ այլ գործողություն կատարելու, բացառությամբ դրա վերադարձի), այլ այլևս ***առկա չէ այն իրավահարաբերությունը***, որի հիմքով բանկում գրավադրվել է որոշակի արժեք:

Հակառակ դեպքում ստացվում է, որ այն իրավիճակում, երբ օրինակ, հաճախորդը բանկում որոշակի գործարք կատարելուց հետո պատահաբար բանկում թողնի որոշակի գույք և առկա լինի ԴԱՀԿ համապատասխան որոշում, ապա բանկը պարտավորված կլինի արգելանք կիրառել այդ գույքի նկատմամբ՝ հրաժարվելով այն հետ տրամադրել սեփականատիրոջը:

Ավելին, գույքի պահատվությունը հանդիսանում է բանկի կողմից մատուցվող առանձին ծառայության տեսակ, որի գծով բանկը կատարում է որոշակի ծախսեր, ուստի ստացվում է, որ բանկը գույքի պահատվության համար կարող է անգամ վճարներ գանձել՝ կամ գույքի սեփականատիրոջից կամ հարկադիր կատարողից:

Ուստի, այս պայմաններում բանկի կողմից արդեն նախկին պարտավորությունների համար գրավադրված և դեռևս բանկում պահվող գույքի արգելադրումը ոչ միայն կնշանակի բանկի կողմից օրենքով սահմանված պարտավորության խախտում, այլև կհակասի գրավի ինստիտուտի էությանն ամբողջությամբ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Օրենքով վերը նշված գույքի բռնագանձման հետ կապված հարցերը կարգավորում են 49-րդ հոդվածով, ըստ որի պարտապանին պատկանող, սակայն այլ անձանց մոտ գտնվող գույքի վրա բռնագանձումը տարածվում է ***ընդհանուր կարգով***՝ այդ գույքը պարտապանին պատկանելու վերաբերյալ փաստաթղթային տվյալների առկայության դեպքում:

Այսինքն, պարտապանի գույքի հայտնաբերումը, այդ թվում՝ այլ անձանց մոտ պահվող, և դրա նկատմամբ որոշակի գործողություններ կատարելը հանդիսանում է բացառապես հարկադիր կատարողի պարտավորությունը և ի տարբերություն Օրենքի 46-րդ և 47-րդ հոդվածներով ամրագրված արգելադրման գործողությունների, չի միջնորդավորվում բանկի կողմից, և հետևաբար, դուրս է բանկի կողմից արգելադրմանն ուղղված գործողությունների շրջանակից:

Հարկ ենք համարում նշել, որ սույն պաշտոնական պարզաբանմամբ նկարագրված Պահատեղում գույքի պահատվության և Անհաշիվ դրամական փոխանցումների գործարքների մասով սահմանվող մոտեցման համար հիմք է ծառայել նաև այս խնդրի շուրջ իրականացված միջազգային փորձի ուսումնասիրությունը, որը նույնպես վկայում է այն մասին, որ ինչպես Անհաշիվ դրամական փոխանցումները, այնպես էլ Պահատեղերում պահվող արժեքները բանկի կողմից արգելադրման ենթակա չեն (օրինակ՝ ԱՄՆ, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Ֆրանսիայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստանի Հանրապետություն):

Այսպես, Ֆրանսիայի դատական ակտերի հարկադիր կատարումը կարգավորող օրենքի L612-1 հոդվածի համաձայն՝ դատական ակտի հարկադիր կատարման համար բռնագանձում կարելի է տարածել միայն պարտապանի ***բոլոր բանկային հաշիվների վրա:*** Այնուամենայնիվ, այս կանոնից բացառություն են կազմում ***դեպո հաշիվները*** և ***պահատուփերում պահվող իրերը***, որոնց համար նախատեսվում է առանձին ընթացակարգ:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությամբ նույնպես արգելանքներ չեն կարող կիրառվել Անհաշիվ դրամական փոխանցումների նկատմամբ՝ դրա անհնարինության պատճառով:

ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Քաղաքացիական դատավարության Օրենսգրքի 700.510 հոդվածի համաձայն՝ Պահատեղերում պահվող արժեքները կարող են բռնագանձվել բացառապես օրենքով սահմանված ***հատուկ կարգով:*** Մասնավորապես, ԱՄՆ հարկադիր կատարման մարմինը կամ քննիչը պարտավոր է Պահատեղի նկատմամբ բռնագանձում տարածելու մասին որոշումն ***անձամբ*** հանձնել պարտապան ֆիզիկական անձին և բանկին: Այնուհետև, հարկադիր կատարողը կամ քննիչը, ֆիզիկական անձի հետ ներկայանում է բանկ և հետևում պահատուփի բացման և դրա պարունակության առգրավման ամբողջ ընթացքին: Այս դեպքում բանկը, որպես բռնագանձման գործողության մասնակից, հաշվի առնելով Պահատեղի բացման համար անհրաժեշտ 2-րդ բանալու առկայությունը բանկի մոտ, իրականացնում է բացառապես Պահատեղի բացման գործառույթ և որևէ այլ կերպ չի միջնորդում հարկադիր կատարողի բռնագանձման գործառույթին:

«Կատարողական վարույթի մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի համաձայն բանկերի կամ այլ վարկային կազմակերպությունների կողմից արգելադրման են ենթակա պարտապանի ***բանկային հաշիվները***, ***արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակցի հաշիվները***, պարտապանի ***արժեթղթերի հատուկ հաշիվները***, պարտապանի ***դեպիտորական պարտավորությունները*** կամ պարտապանի ***առևտրային կամ քլիրինգային հաշիվներում*** առկա միջոցները:

Այսպիսով, Կենտրոնական բանկը գտնում է, որ Անհաշիվ դրամական փոխանցումների, Պահատեղի բռնագանձման (դրանց նկատմամբ արգելանքի կիրառման մասով), ինչպես նաև բանկում հաճախորդի պարտավորությունների կատարումն ապահովելու համար գրավադրված և այնուհետև հիմնական պարտավորության դադարման արդյունքում դեռևս բանկում մնացած այդ գույքի արգելադրման գործողությունները չեն կարող դրվել բանկի վրա:

Ուստի, հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև Օրենքի ընդունման նպատակները և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Պ ա շ տ ո ն ա պ ե ս պ ա ր զ ա բ ա ն ու մ է.

1. Անհաշիվ դրամական փոխանցումները չեն հանդիսանում այդ գործարքում նշված ստացող անձի սեփականությունը՝ մինչ դրամական միջոցների փաստացի տրամադրումը հասցեատիրոջը, և հետևաբար, բանկի կողմից ենթակա չեն արգելադրման:

2. Օրենքի 46-րդ և 47-րդ հոդվածների հիման վրա ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների հիման վրա բանկի կողմից արգելադրման ենթակա չէ՝

1) Պահատեղում պահվող հաճախորդի գույքը,
2) բանկի հաճախորդի հիմնական պարտավորության դադարումից հետո ի ապահովումն այդ պարտավորության գրավադրված գրավի առարկան, որը դեռևս գտնվում է բանկի պահպանության (տիրապետման) ներքո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
11 մարտի 2016 թ., N 3

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՅԻՍ 2016)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 16

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 19

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ համախառն արտաքին պարտք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 34

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 35

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 45

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 65
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 75
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 77
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 85
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում
Հաճախորդների և նրանց բանկային հաշիվների քանակը

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	***2016թ. ապրիլ***	***2016թ. ապրիլի իրական աճի հնդեքսը 2015թ. ապրիլի նկատմամբ (%)***	***2016թ. մայիս***	***2016թ. մայիսի իրական աճի հնդեքսը 2015թ. մայիսի նկատմամբ (%)***
Տնտեսական ակտիվության ցուցանիշ		105.6[1]		105.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	115680.1	111.5[1]	112485.6	109.1
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	46502.3	105.4	57436.5	105.8
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	19736.5	83.5	28491.9	91.0
Առևտրի շրջաառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	165625.6	100.1	173279.1	101.0
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	96418.6	107.6	99871.3	105.8
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	643.1	99.2	530.7	78.3
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	187244[1]	104.9[2]	188094[3]	106.9[4]

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2016 թ.	***Սպառողական գների հնդեքս***	***Արդյունաբերողների արտադրանքի գների հնդեքս***	***Գների հնդեքս կապիտալ շինարարությունում***	***Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հնդեքս***
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.2	101.8	98.8	99.7
Փետրվար	98.6	101.8	101.4	98.3
Մարտ	99.7	100.9	96.4	98.7
Ապրիլ	99.7	99.5	100.3	96.5
Մայիս	99.3	101.7	100.8	91.8
2016 թ. հունվար – մայիսը 2015 թ. հունվար – մայիսի նկատմամբ	98.4	96.9	99.0	90.0

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	***2014***	***2015***	***2016***	***2016***	***2016***
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	2.8	2.5 [1]	2.2	2.2	-0.4
Փետրվար	-1.2	- 0.1 [1]	-1.4	0.8	-1.7
Մարտ	-0.4	-0.1	-0.3	0.4	-2.0
Ապրիլ	0.5	-0.4	-0.3	0.1	-1.9
Մայիս	-0.8	-0.5	-0.7	-0.6	-2.1
Հունիս	-1.8	-1.4			
Հուլիս	-0.9	-2.2			
Օգոստոս	0.7	0.1			
Սեպտեմբեր	0.4	0.1			
Հոկտեմբեր	1.0	-0.4			
Նոյեմբեր	1.3	0.6			
Դեկտեմբեր	3.0	1.7			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	4.6	-0.1			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.0	3.7			

ԳՆԱՁԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [5]

Անվանում	***2016 թ. մայիսը 2016 թ. ապրիլի նկատմամբ (%)***	***Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)***
ՍԳԻ	**99.33**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**-0.92**	**-0.42**
Բանջարեղեն և կարտոֆիլ	-7.06	-0.38
Ձու	-11.45	-0.14
Միրգ	3.38	0.09
Հացամթերք	0.42	0.04
Մսամթերք	0.23	0.02
Կաթնամթերք	-0.46	-0.02
Ծխախոտ	0.51	0.01
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**-0.62**	**-0.14**
Հագուստ և գործվածք	-1.72	-0.05
Մշակույթի ապրանքներ	-2.17	-0.03
Գեղահարդարման ապրանքներ	-1.31	-0.03
Լվացող միջոցներ	-1.41	-0.02
Անձնապիտո ապրանքներ	-2.06	-0.02
Ծառայություններ, որից՝	**-0.35**	**-0.11**
Բնակարանային, կոմունալ	-0.75	-0.11
Հանգստի կազմակերպման	-2.96	-0.02
Տրանսպորտի	0.52	0.02
Բուժսպասարկման	0.50	0.01

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ[6]

ժամանակաշրջան	2014	2015	2016
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.17	0.94[2]	0.02[2]
Փետրվար	-0.45	0.21[2]	-0.09
Մարտ	0.02	-0.09	-0.11
Ապրիլ	0.14	-0.39	-0.11
Մայիս	0.05	-0.14	-0.18
Հունիս	-0.19	-0.41	
Հուլիս	0.30	-0.56	
Օգոստոս	0.32	-0.20	
Սեպտեմբեր	0.47	0.08	
Հոկտեմբեր	0.47	0.28	
Նոյեմբեր	0.37	-0.13	
Դեկտեմբեր	1.11	-0.12	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.03	3.82[2]	-1.05[2]
Փետրվար	2.35	4.45[2]	-1.39
Մարտ	1.82	4.40	-1.47
Ապրիլ	1.44	3.83	-1.31
Մայիս	1.09	3.50	-1.35
Հունիս	0.43	3.26	
Հուլիս	0.63	2.42	
Օգոստոս	0.81	1.93	
Սեպտեմբեր	1.01	1.55	
Հոկտեմբեր	1.15	1.35	
Նոյեմբեր	1.46	0.74	
Դեկտեմբեր	2.75	-0.54	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[6]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**-1.35**
Ձու	-0.29
Խոզի միս	-0.22
Պանիր տնական (կովի կաթից)	-0.16
Հավի բուդ	-0.12
Լվացքի փոշի ավտոմատ մեքենաների համար	-0.12
Ծառայություններ զբոսաշրջության՝ արտասահմանյան ուղերթ	-0.10
Թռչնի միս	-0.09
Բենզին	-0.07
Ալյուր բարձր տեսակի	-0.07
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	-0.07
Ավտոմեքենա Նիվա-21214	-0.06
Պանիր Լոռի	-0.05
Օծանելիք	0.06
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.07
Ծառայություններ իրավաբանական խորհրդատվական	0.14

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:
[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ վերանայված տվյալների հիման վրա:
[3] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:
[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների հիման վրա:
[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:
[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2016 թ. հունվար - ապրիլ (մլն ԱՄՆ դոլար)*	*2016 թ. հունվար - ապրիլը 2015 թ. հունվար - ապրիլի նկատմամբ (%)*	*2016 թ. հունվար – մայիս (մլն ԱՄՆ դոլար)*	*2016 թ. հունվար – մայիսը 2015 թ. հունվար – մայիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	520.6	123.6	656.9	120.1
Ներմուծում *(ՍԻՖ)*	990.6	101.4	1235.8	100.9
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	470.0	84.5	578.9	85.3

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2015 թվական**					
	Մայիս			**Հունվար – մայիս**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	84300	19454	64846	306405	99784	206621
ԱՄՆ	15469	6840	8628	67968	37604	30364
Ուկրաինա	588	730	-141	2811	3208	-398
Ղազախստան	2237	147	2090	7411	764	6647
Գերմանիա	8950	2507	6443	18522	16791	1731
Իսպանիա	576	1108	-532	3259	5974	-2715
Ֆրանսիա	1675	1391	284	7261	6950	311
ԱՄԷ	1822	7994	-6171	9253	18234	-8981
Չինաստան	185	3509	-3324	754	18081	-17327
Թուրքիա	240	1202	-962	1891	5150	-3259
Այլ երկրներ	15863	14070	1793	93926	71517	22408
Ընդամենը	**131905**	**58951**	**72954**	**519460**	**284057**	**235403**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2016 թվական**					
	Մայիս			**Հունվար – մայիս**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	67254	33530	33723	266311	146565	119746
ԱՄՆ	14661	6156	8506	67534	32723	34811
Ուկրաինա	731	616	115	3425	3778	-353
Ղազախստան	1247	293	953	5519	2595	2924
Գերմանիա	2726	2104	622	31731	10751	20980
Իսպանիա	821	1167	-345	3722	4731	-1009
Ֆրանսիա	1781	1706	74	9992	6149	3844
ԱՄԷ	1285	4292	-3007	8621	11466	-2845
Չինաստան	248	3688	-3440	923	18653	-17730
Թուրքիա	202	436	-234	1101	2772	-1671
Այլ երկրներ	18558	13568	4991	88327	73805	14522
Ընդամենը	**109514**	**67556**	**41959**	**487206**	**313988**	**173218**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2015 թվական					
	Մայիս			Հունվար – մայիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	40471	9345	31126	146293	47630	98663
ԱՄՆ	7423	3283	4139	32424	17955	14470
Ուկրաինա	282	350	-68	1341	1531	-190
Ղազախստան	1074	71	1004	3539	364	3174
Գերմանիա	4288	1203	3085	8848	8027	822
Իսպանիա	276	532	-256	1554	2852	-1298
Ֆրանսիա	804	667	137	3463	3320	143
ԱՄԷ	877	3833	-2957	4420	8707	-4287
Չինաստան	89	1685	-1597	360	8624	-8264
Թուրքիա	115	577	-462	903	2459	-1555
Այլ երկրներ	7612	6751	861	44805	34128	10678
Ընդամենը	**63311**	**28297**	**35013**	**247951**	**135596**	**112355**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2016 թվական					
	Մայիս			Հունվար – մայիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	32168	16032	16136	129028	71114	57914
ԱՄՆ	7014	2945	4069	32755	15874	16881
Ուկրաինա	349	294	55	1660	1831	-171
Ղազախստան	596	140	456	2677	1252	1426
Գերմանիա	1304	1006	298	15503	5205	10298
Իսպանիա	393	558	-165	1806	2294	-489
Ֆրանսիա	852	816	36	4853	2976	1877
ԱՄԷ	615	2054	-1439	4191	5544	-1353
Չինաստան	119	1765	-1646	447	9030	-8582
Թուրքիա	97	209	-112	536	1346	-810
Այլ երկրներ	8875	6490	2385	42813	35831	6982
Ընդամենը	**52382**	**32310**	**20072**	**236271**	**152297**	**83974**





ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔՆ ԸՍՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2015					2016
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.
Դրամական փոխանցումներ	**227.4**	**366.8**	**393.1**	**443.0**	**1430.3**	**207.1**
Աշխատողների զուտ աշխատավարձ[1]	80.8	161.0	190.2	206.0	638.1	73.6
Աշխատողների աշխատավարձ[2]	104.1	207.4	245.0	265.3	821.8	94.8
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ[3]	16.1	32.1	37.9	41.1	127.3	14.7
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված համախառն եկամուտներ	20.8	41.4	48.9	52.9	163.9	18.9
Անձնական տրանսֆերտներ	127.5	168.8	160.4	192.3	649.0	116.8
Կապիտալ տրանսֆերտներ	3.0	4.9	4.5	3.5	15.9	2.0

[1] Զուտ աշխատավարձը/եկամուտը սեզոնային աշխատողների կողմից ստացված աշխատավարձն է/եկամուտն է առանց եկամտահարկի, տրանսպորտային ծախսերի և արտերկրում կատարված այլ ծախսումների:
[2] Ներառված չեն վճարային հաշվեկշռի համար կատարված այլ լրահաշվարկները, մասնավորապես՝ ՀՀ տարածքում տեղաբաշխված անկլավային տարածքում ռեզիդենտ աշխատողների ստացած աշխատավարձերը:
[3] Արտերկիր սեզոնային աշխատանքի մեկնողների մի մասի ստացած եկամուտը դասակարգվում է ոչ թե որպես աշխատավարձ, այլ որպես ծառայությունների արտահանում, քանի որ նրանց դեպքում չկան գործատու-աշխատող հարաբերություններ: Գնահատականը տրված է 2011 թվականից հիմնվելով հարցումների տվյալների վրա:

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (Ի ՆԴԵՔՍ) [1,2,3]

2015	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	143.6	149.3	147.8	142.6	135.8	137.6	136.7	140.4	140.7	140.2	142.2	145.2
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	243.1	256.3	257.9	253.3	243.7	250.6	254.3	261.1	262.6	263.4	266.3	268.4
2016	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	151.6	146.7	143.9	140.6	141.5							
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	273.5	269.3	267.1	263.0	264.0							

[1] Հաշվարկի մեջ ընդգրկվել են 12 (նախկինում 11) գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը 2007-2011 թթ. կշիռներով (նախկինում 2003-2007 թթ.), 1997=100:
[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[3] Սեը նշանակում է արժևորում:

ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌ (ՍՏԱՆԴԱՐՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԸՍՏ «ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ԿԱԶՄՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ» 6-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ)[1,2]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2015					2016
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ	**-256.2**	**19.2**	**51.6**	**-93.8**	**-279.1**	**-166.7**
Կրեդիտ	904.4	1,228.0	1,429.0	1,365.0	4,926.4	985.4
Դեբետ	1,160.6	1,208.8	1,377.4	1,458.8	5,205.5	1,152.1
Ապրանքներ և ծառայություններ	**-327.9**	**-233.6**	**-267.0**	**-452.5**	**-1,280.9**	**-217.4**
Կրեդիտ	612.3	780.4	930.6	813.3	3,136.6	702.4
Դեբետ	940.2	1,014.0	1,197.6	1,265.8	4,417.6	919.7
Ապրանքներ	-309.7	-236.7	-275.6	-364.4	-1,186.4	-212.9
Կրեդիտ	327.0	440.7	419.2	437.0	1,623.9	397.8
Դեբետ	636.7	677.5	694.8	801.4	2,810.3	610.7
Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի	-323.4	-265.8	-290.3	-380.5	-1,260.1	-234.7
Կրեդիտ	307.6	411.0	395.1	413.2	1,527.0	374.4
Դեբետ	631.0	676.8	685.5	793.7	2,787.0	609.1
որից՝ վերաարտահանում (կրեդիտ)	35.7	27.6	29.3	30.5	123.1	24.0
Ապրանքների վերավաճառքի գծով զուտ արտահանում (կրեդիտ)	-	-	-	-	-	-
Ոչ մոնետար ոսկի	13.7	29.1	14.8	16.2	73.7	21.8
Կրեդիտ	19.3	29.8	24.1	23.8	96.9	23.4
Դեբետ	5.6	0.7	9.3	7.6	23.3	1.6
Ծառայություններ	-18.2	3.1	8.6	-88.1	-94.5	-4.5
Կրեդիտ	285.4	339.6	511.4	376.3	1,512.7	304.6
Դեբետ	303.5	336.5	502.8	464.4	1,607.3	309.1
Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ	0.3	0.4	0.8	1.9	3.4	0.9
Կրեդիտ	0.3	0.4	0.8	1.9	3.4	0.9
Դեբետ	-	-	-	-	-	-
Ապրանքներ վերամշակման համար հաշվետու երկրում - ապրանքներ վերադարձված (կր), ապրանքներ ստացված (դբ)	0.3	0.4	0.8	1.9	3.4	0.9
Կրեդիտ	12.0	12.6	16.6	14.6	55.7	17.2
Դեբետ	11.7	12.2	15.8	12.7	52.4	16.4
Ապրանքներ վերամշակման համար արտերկրում - ապրանքներ ուղարկված (կր), ապրանքներ վերադարձված (դբ)	-	-	-	-	-	-
Կրեդիտ	-	-	-	-	-	-
Դեբետ	-	-	-	-	-	-
Տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ	-0.2	-0.2	-0.2	-0.3	-0.9	-0.2
Կրեդիտ	0.4	0.5	0.5	0.5	2.0	0.4
Դեբետ	0.6	0.7	0.7	0.9	2.9	0.6
Տրանսպորտ	-51.4	-38.2	-47.6	-60.3	-197.5	-39.7
Կրեդիտ	32.3	44.0	43.9	43.3	163.5	38.0
Դեբետ	83.7	82.1	91.5	103.6	361.0	77.6
որից՝ մարդատար	-8.9	-8.1	-12.0	-11.9	-40.9	-7.9
Կրեդիտ	3.2	5.5	6.4	4.8	20.0	3.2
Դեբետ	12.2	13.6	18.4	16.8	61.0	11.1
Բեռնատար	-42.0	-29.7	-35.9	-48.2	-155.7	-31.1
Կրեդիտ	25.9	34.6	32.9	34.3	127.6	31.5
Դեբետ	67.9	64.3	68.7	82.4	283.3	62.6
Այլ	-0.5	-0.3	0.2	-0.3	-0.8	-0.6
Կրեդիտ	3.2	3.9	4.6	4.1	15.9	3.3
Դեբետ	3.7	4.3	4.4	4.4	16.7	3.9
Ծովային տրանսպորտ	-10.5	-11.1	-11.4	-13.1	-46.1	-10.1
Կրեդիտ	-	-	-	-	-	-
Դեբետ	10.5	11.1	11.4	13.1	46.1	10.1
Օդային տրանսպորտ	-9.4	-8.7	-12.4	-13.5	-43.9	-9.7
Կրեդիտ	5.6	8.3	8.9	7.6	30.5	5.5
Դեբետ	15.0	17.0	21.3	21.1	74.4	15.2
Տրանսպորտի այլ տեսակներ	-31.5	-18.4	-23.7	-33.6	-107.3	-19.9
Կրեդիտ	26.6	35.6	35.0	35.6	132.8	32.4
Դեբետ	58.1	54.0	58.7	69.2	240.1	52.2

1	2	3	4	5	6	7
Փոստային և սուրհանդակային ծառայություններ	-0.1	-0.0	-0.1	-0.1	-0.2	-0.0
Կրեդիտ	0.1	0.1	0.1	0.1	0.2	0.1
Դեբետ	0.1	0.1	0.1	0.1	0.5	0.1
Ճանապարհորդություն	10.3	-8.9	7.9	-69.2	-60.0	10.3
Կրեդիտ	180.0	195.0	352.6	208.2	935.8	190.7
Դեբետ	169.7	204.0	344.7	277.4	995.8	180.4
Գործնական	-19.1	-29.0	-32.7	-30.1	-110.9	-18.8
Կրեդիտ	21.8	24.7	45.5	30.1	122.0	21.7
Դեբետ	40.9	53.6	78.2	60.2	232.9	40.5
Անձնական	29.4	20.0	40.5	-39.1	50.9	29.1
Կրեդիտ	158.2	170.3	307.1	178.2	813.8	169.0
Դեբետ	128.8	150.3	266.6	217.2	762.9	139.9
Շինարարություն	18.4	36.8	44.3	39.9	139.4	16.4
Կրեդիտ	19.9	38.9	48.2	56.3	163.2	18.4
Դեբետ	1.5	2.1	3.9	16.3	23.8	2.0
Ապահովագրություն և կենսաթոշակային ծառայություններ	-5.9	-6.0	-6.2	-7.7	-25.8	-4.3
Կրեդիտ	3.7	4.7	4.6	4.8	17.8	4.5
Դեբետ	9.6	10.7	10.9	12.4	43.7	8.8
Ֆինանսական ծառայություններ	-2.2	-1.5	-1.3	-2.1	-7.1	-2.6
Կրեդիտ	1.5	1.4	1.3	1.9	6.1	1.3
Դեբետ	3.7	2.8	2.6	4.0	13.2	4.0
Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	21.6	24.0	24.7	25.9	96.3	24.0
Կրեդիտ	28.5	32.0	35.0	34.9	130.5	29.7
Դեբետ	6.9	8.0	10.3	9.0	34.3	5.8
Այլ գործնական ծառայություններ	-11.5	-7.2	-16.2	-18.0	-52.8	-12.6
Կրեդիտ	8.3	10.3	11.6	12.3	42.6	9.4
Դեբետ	19.7	17.5	27.8	30.3	95.4	22.0
Անձնական, մշակութային և զվարճանքի ծառայություններ	0.4	2.9	3.2	3.1	9.6	0.4
Կրեդիտ	3.2	4.6	5.1	5.8	18.8	3.3
Դեբետ	2.8	1.7	2.0	2.7	9.2	2.8
Պետական ապրանքներ և ծառայություններ	2.0	0.9	-0.7	-1.3	0.9	3.0
Կրեդիտ	7.2	7.6	7.6	6.5	29.0	8.0
Դեբետ	5.3	6.7	8.3	7.8	28.0	5.0
Սկզբնական եկամուտներ	**-36.2**	**112.0**	**172.6**	**186.9**	**435.4**	**-56.1**
Կրեդիտ	119.5	223.4	261.9	281.0	885.9	109.8
Դեբետ	155.7	111.4	89.4	94.1	450.5	166.0
Աշխատողների վարձատրություն	69.7	170.0	203.3	218.8	661.7	58.3
Կրեդիտ	109.3	212.5	250.1	270.5	842.4	99.3
Դեբետ	39.6	42.5	46.8	51.7	180.6	41.0
Ներդրումային եկամուտներ	-105.8	-58.0	-30.7	-31.9	-226.4	-114.4
Կրեդիտ	10.3	10.9	11.8	10.5	43.5	10.6
Դեբետ	116.1	68.9	42.6	42.4	269.9	125.0
Ուղղակի ներդրումներից	-46.4	8.7	36.4	34.9	33.6	-49.3
Կրեդիտ	0.2	0.2	0.2	0.2	0.7	0.2
Դեբետ	46.5	-8.5	-36.2	-34.7	-32.9	49.5
Եկամուտ կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցությունից	-41.8	14.3	43.9	41.2	57.6	-41.6
Կրեդիտ	-	-	-	-	-	-
Դեբետ	41.8	-14.3	-43.9	-41.2	-57.6	41.6
Շահաբաժիններ և գանձումներ քվազի-կորպորացիաների եկամուտներից	-0.9	-32.0	-1.3	-5.2	-39.4	-0.4
Կրեդիտ	-	-	-	-	-	-
Դեբետ	0.9	32.0	1.3	5.2	39.4	0.4
Վերաներդրված եկամուտ	-40.9	46.3	45.1	46.4	97.0	-41.2
Կրեդիտ	-	-	-	-	-	-
Դեբետ	40.9	-46.3	-45.1	-46.4	-97.0	41.2
Տոկոսավճարներ	-4.5	-5.6	-7.5	-6.3	-24.0	-7.7
Կրեդիտ	0.2	0.2	0.2	0.2	0.7	0.2
Դեբետ	4.7	5.8	7.7	6.5	24.7	7.9
Պորտֆելային ներդրումներից	-7.2	-15.6	-15.1	-15.7	-53.6	-13.1
Կրեդիտ	2.5	3.0	3.2	2.5	11.2	2.7
Դեբետ	9.7	18.6	18.3	18.2	64.7	15.8
